№ 46 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 1 — 1901 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 1 № 46

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Մրցութեան ճանապարհին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Անբերրիութիւնից վնասված գիւղացիների օգտին. Հնութեան մնացորդները։ Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Ագուլեցին Ագուլիսում։*

## ՄՐՑՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

—

Գերմանիայի ձեռք բերած նշանաւոր դիրքը Օսմանեան պետութեան տնտեսական կեանքի մէջ շարունակում է ընդհանուր հետաքրքրութեան նիւթ լինել քաղաքական գրողների եւ պետական գործողների շրջաններում։ Նորերս Ենայում լոյս տեսաւ մի նոր հետաքրքրական աշխատութիւն այդ առարկայի մասին, որի հեղինակը, դոկտոր Կրաուս, լաւ ծանօթ լինելով Թիւրքիայում կատարվող գործերին, հաստատում է, որ Գերմանիան իսկապէս էական նուաճումներ է անում օսմանցիների տնտեսական աշխարհում։

Ներկայումս օսմանեան պետութեան մէջ գործում է 230 միլիոն մարկ գերմանական դրամագլուխ և Գերմանիան ունի իր ձեռքում $9^1/_2$ միլիոն լիրայի թիւրքական արժէթղթեր։ Թիւրքիայի մէջ գերմանական ապրանքները օրից օր աւելի ու աւելի ընդարձակ վաճառանոց են դրաւում։ Թիւրքիան տալիս է Գերմանիային միայն հում նիւթեր, իսկ ստանում է մշակված և գործարանի բովով անցած ապրանքներ։ Գերմանիայից ստացվում են ամեն տեսակ ռազմամթերք, թնդանօթներ, հրացաններ, երկաթուղիների համար հարկաւոր պարագաներ, ձօթեր, գործուածքներ, երկաթէղէն, դեղագործական և ներկարարական իրեր, նուրբ կաշիներ, յախճապակի և այլն։

Զը նայելով այն հանգամանքին, որ Աւստրիան երկաթուղիներով կապված է Թիւրքիայի հետ, ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Գերմանիան իր նաւագնացական հաղորդակցութեամբ աւելի գործ է տեսնում, քան Աւստրիան իր երկաթուղիներով։ Միայն Համբուրգ քաղաքը տարեկան տասներեք միլիոն մարկ արժողութեան ապրանք է ստանում Թիւրքիայից և մօտ տասն միլիոնի արտահանում է դէպի Թիւրքիա։ Գերմանիան այժմ աւելի և զօրացնում է ծովային հաղորդակցութեան ոյժը և յոյս ունի իր նաւերի միջոցով զարգացնել իր առևտուրը ամենաընդարձակ ծաւալով։

Թէ նախկին հետազօտողները և թէ դոկտոր Կրաուս չեն հաւատում, որ Թիւրքիայի ազգաբնակութիւնը ընդունակ լինի կարճ միջոցում լուրջ քայլեր անել գործարանական ասպարէզում։ Թիւրքիան երկար ժամանակ կը մնայ հում նիւթ արտադրող երկիր, որովհետև երկրի մէջ շատ քիչ ջանք է նկատվում լուրջ արհեստագործական կրթութիւն տալու մասին։ Սերնդին և քաջալերելու էական աջակցութեամբ տեղական նախաձեռնողներին։ Թիւրքիան մեծ պարտքեր է արել, բայց պարտադրումների շատ փոքր մասն է մնացել երկրի մէջ և այդ գումարի նշանաւոր մասը գործադրվել է արդիւնագործութեան հետ կապ չունեցող գործերի վրա։ Օրինակ, հաշված է, որ Թիւրքիայի վերցրած այն պարտքից, որ գոյացել էր մինչև վերջին ռուս-թիւրքական պատերազմը, այն է 1064 միլիոն տալերից Թիւրքիան իսկապէս ստացել էր միայն 631 միլիոն տալեր, մնացած գումարը բաժանվել է եւրոպական բօրսաների մէջ։ Նոյն երևոյթը կարելի է տեսնել և ուրիշ դէպքերում։ Եթէ Թիւրքիան ցանկութիւն ունի փոքր ի շատէ տանելի և բաւարար ապագայ ստեղծելու իր ազգաբնակութեան համար, նա յամենայն դէպս պէտք է ձեռք քաշէ մինչև այժմ իր վարած ներքին քաղաքականութիւնից և լայն ասպարէզ բանայ նախաձեռնող և ձեռնարկու ոգու ազատ գործունէութեան և զարգացման համար։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԱՄՈՒԼ

—

*Կովկասեան երկրի զարմանալի հարստութիւնները եւ այդ երկրում ապրող ազգաբնակութեան դառն աղքատութիւնը—սրանք ծայրայեղութիւններ են, որոնք ծակում են ամեն մի հետազօտողի աչքերը։ Այս դրութիւնը գեղեցիկ կերպով պատկերացրած է «С. Петер. Вѣд.» լրագրի մէջ մի յօդուածում։ Յօդուածի հեղինակը, հիմնվելով «Մուրճ» ամսագրի այս տարվայ № 1-ի մէջ տպված «Մեր երկրի քնած ոյժերը» յօդուածի վրա, այսպէս է նկարում մեր իրականութիւնը.*

*Ծանր է անդրկովկասեան գիւղացու դրութիւնը. կարմիր չէ նրա օրը. աշխատում է նա օր ու գիշեր, ձեռքերը չը ծալելով, իսկ առջեւում մխիթարական ոչինչ չէ երեւում։ Ուրախ չէ ապրում եւ մեր հողատէրը. ծանր պարտքերի լուծի տակ նա դէս ու դէն է ընկնում, ինչպէս ձուկը սառուցի տակ, եւ ելք չէ գտնում։ Դժուար է երեւակայել, որ մի երկիր, որը մի ժամանակ հին յոյների եւ հռոմայեցիների նախանձի առարկան էր, կարող է հասնել այս աստիճան նիւթական տրտնանկութեան։ Տխուր դրութիւն։ Ունենալ ձեռքի տակ ալպիական հրաշալի արօտատեղեր, որոնք կարող էին մեր երկրում ստեղծել շվեյցարական տնտեսութիւն, ունենալ բազմատեսակ, շատ առատ հանքեր, ապրել հարաւային բարերեր երկնքի տակ, ամեն տեսակ արդիւնաբերական ձեռնարկութիւնների համար նպաստաւոր պայմանների մէջ, այս բոլորը ունենալով քարշ տալ մի ողորմելի եւ զրկանքներով լի գոյութիւն—սա մի կատարեալ դժբախտութիւն է։ Իսկ երբ մի երկրում ազգաբնակութիւնը աղքատ է, այնտեղ դժուար է երեւակայել մտաւոր եւ հասարակական լայն առաջադիմութիւն, այնտեղ խօսք չէ կարող լինել բարձր հոգեկան պահանջների մասին։ Գուցէ երկիրը խիտ է բնակեցրած եւ այդ պատճառով չէ կարող տեղ տալ ազգաբնակութեան նոր աճեցման։ Անպայման ոչ։ Անդրկովկասը ունի $5^1/_2$ միլիոն բնակիչներ. այս թիւը միայն երրորդ կամ չորրորդ մասն է կազմում այն բնակչութեան, որը կարող էր լիովին ապահովված ապրել այդ երկրի սահմաններում։ Անհրաժեշտ է միայն գործունէութեան հրաւիրել նրա արդիւնագործութեան ոյժերը, որոնք դեռ քնած դրութեան մէջ են գտնվում։ Զարգացրէք երկրագործական կուլտուրան, ժողովրդական մասսայի այս միակ պարապմունքը, շահագործեցէք հանքային հարստութիւնները, խելացի հիմքերի վրա կազմակերպեցէք գիւղատնտեսութիւնը, զարկ տուէք գործարանական եւ տնայնագործական արդիւնաբերութեան, տարածեցէք արհեստագիտական կրթութիւն, պարապմունք տուէք աշխատանքի ընդունակ բանուոր ձեռքերին, որոնց թիւը միլիոն է, եւ այն ժամանակ խօսել կը սկսեն երկրի քնած ոյժերը եւ երկրի խորքերից հարստութիւնների այնպիսի քանակութիւն դուրս կը հանեն, որ կը կերակրէ աւելի մեծ ազգաբնակութիւն եւ կը բարձրացնէ նրա կուլտուրական մակերեւոյթը...*

*Տեսնում էք որքան հարցեր կան մեր առջեւ, հարցեր, որոնք մեզ համար կեանքի եւ մահվան նշանակութիւն ունեն։ Մեզ էլ, այո, որքան էլ աղքատ ու թշուառ լինենք, ժպտում է մի լաւ ապագայ։ Բայց այդ ապագային հասնելու համար հարկաւոր է, որ մենք լինենք եռանդուն, բարեխիղճ, պիտի գործենք եւ գործենք։ Եթէ ոչ, մեր հարուստ երկիրը միշտ պիտի ծաղրէ մեր մերկութիւնը, իսկ ապահով ու գեղեցիկ ապագան միշտ ապագայ պիտի մնայ։*

## ԱՆԲԵՐՐԻՈՒԹԻՒՆԻՑ ՎՆԱՍՎԱԾ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ախալքալաքի այն գիւղացիների օգտին, որոնք վնասվել են միջատներից, մենք ստացանք բժշկապետ Յովհաննէս Գասպարեանից 100 ռուբլի, Յովհաննէս Ղորղանեանից 50 ռ., Ալէքսանդր Ստեփանեանից 1 ռուբլի, ընդամենը 251 ռուբլի. իսկ նախկին 270 ռուբլու հետ միասին 421 ռուբլի։

## ՀՆՈՒԹԵԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ

(Նամակ Կարսից)

—

*Օգտվելով այն առիթից, որ ռուսաց լրագիրներում լուրջ մտածողութեան նիւթ է դարձել հնութիւնները օտարների յափշտակութիւնից ազատելու խնդիրը, ցանկանում ենք մի քանի դիտողութիւններ անել ոչ այն մասին, թէ ինչ միջոցներով կարելի է ազատել հնութիւնները օտարների ձեռքից—այդ մասին թող ձեռնհաս անձինք մտածեն—այլ ուզում ենք այստեղ մատնանիշ անել այն պայմանները ու հանգամանքները, որոնց շնորհիւ անթիւ հնութիւններ լոյս աշխարհ են գալիս ժողովրդի մէջ եւ նրա ձեռքով էլ անհետ կորչում։*

*Որ ժողովրդի ձեռքը շատ մեծ քանակութեամբ հնութիւններ են անցել եւ այժմ էլ շարունակ անցնում են, դա անհերքելի է։ Թերահաւատները թող հարց ու փորձ անեն մի որ եւ է գիւղացու կամ նոյն իսկ քաղաքացու այդ մասին, միայն, ի հարկէ, շատ հեռուից եւ կողմնակի կերպով սկսելով հարցուփորձը, որովհետեւ նրանք առհասարակ շատ խոյս են տալիս հնութիւնների մասին խօսելուց մի անհասկանալի վախ զգալով, այդ ժամանակ հարցնողները կը համոզվեն, որ շատ թանգագին հնութիւններ են անցել ժողովրդի ձեռքը. էլ ժանգոտ թուր, էլ պուտուկով փող, էլ կճուճ ու քոցի, էլ գերեզման ու կռապաշտի տուն, էլ մզրաղ ու թագ, էլ թանգագին ակ, էլ եղան գլուխ, էլ կուռք, էլ զօրաւոր սուրը գիրք, էլ սել. այս բոլորին Ագուլիսում չը կայ մի համալսարանաւարտ մարդ, որի հայրն էլ համալսարանական կրթութիւն ստացած լինի։ Նոյն իսկ մենք չենք ճանաչում մի բարձրագոյն կրթութեան տէր անձնաւորութիւն անգամ, որի հայրը գէթ միջնակարգ կրթութիւն ունենար։*

*Այդ նրանից է, որ ագուլեցին թէեւ վաղուց է դուրս եկել գիւղական կեանքից, բայց նա միակողմանի է շփվել քաղաքակիրթ աշխարհի հետ, նա վերցրել է միայն արտաքինը։ Օրինակ, Ագուլիսը թէեւ գիւղ է հաշուում, բայց համարեա չէք գտնի մի անձնաւորութիւն, որ եւրոպական շորեր չը լինի հագնելիս, կամ որի տուն ու տեղը եւրոպական բնաւորութիւն կրելիս չը լինեն։ Այն ինչ, եթէ այդ չափով չափելու լինենք, պէտք էր, որ ագուլեցին բարձրագոյն կրթութիւն ստացած մի քանի սերունդ տուած լինէր։*

*Ագուլեցին կրթութիւն է տալիս իր որդուն, որովհետեւ տեսնում է, որ առանց կրթութեան դժուար է ապրել, դժուար է գոյութեան կռիւ մղել—եւ ոչ այն պատճառով, որ նա զգում է կրթութեան բարձր նշանակութիւնը, նրա անհրաժեշտութիւնը մարդու համար։ Ապացոյց, որ ագուլեցին այժմ սկսել է իր աղջկան էլ ուսում տալ։ Եւ ինչի՞ համար. որովհետեւ տեսնում է, որ անկիրթ աղջկան լաւ տեղից չեն տանում։ Ուրեմն պէտք է աշխատել աղջկան էլ կրթութեան վկայական տալ, որը վկայական է ոչ թէ նրա զարգացողութեան, այլ գրաւական նրա ապահով ամուսնու-*

*և մօտ տասն միլիոնի արտահանում է դէպի Թիւրքիա։ Գերմանիան այժմ աւելի և զօրացնում է ծովային հաղորդակցութեան ոյժը և յոյս ունի իր նաւերի միջոցով զարգացնել իր առևտուրը ամենաընդարձակ ծաւալով։*

*Թէ նախկին հետազօտողները և թէ դոկտոր Կրաուս չեն հաւատում, որ Թիւրքիայի ազգաբնակութիւնը ընդունակ լինի կարճ միջոցում լուրջ քայլեր անել գործարանական ասպարէզում։ Թիւրքիան երկար ժամանակ կը մնայ հում նիւթ արտադրող երկիր, որովհետև երկրի մէջ շատ քիչ ջանք է նկատվում լուրջ արհեստագործական կրթութիւն տալու մասին։ Սերնդին և քաջալերելու էական աջակցութեամբ տեղական նախաձեռնողներին։ Թիւրքիան մեծ պարտքեր է արել, բայց պարտադրումների շատ փոքր մասն է մնացել երկրի մէջ և այդ գումարի նշանաւոր մասը գործադրվել է արդիւնագործութեան հետ կապ չունեցող գործերի վրա։ Օրինակ, հաշված է, որ Թիւրքիայի վերցրած այն պարտքից, որ գոյացել էր մինչև վերջին ռուս-թիւրքական պատերազմը, այն է 1064 միլիոն տալերից Թիւրքիան իսկապէս ստացել էր միայն 631 միլիոն տալեր, մնացած գումարը բաժանվել է եւրոպական բօրսաների մէջ։ Նոյն երևոյթը կարելի է տեսնել և ուրիշ դէպքերում։ Եթէ Թիւրքիան ցանկութիւն ունի փոքր ի շատէ տանելի և բաւարար ապագայ ստեղծելու իր ազգաբնակութեան համար, նա յամենայն դէպս պէտք է ձեռք քաշէ մինչև այժմ իր վարած ներքին քաղաքականութիւնից և լայն ասպարէզ բանայ նախաձեռնող և ձեռնարկու ոգու ազատ գործունէութեան և զարգացման համար։*

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱԳՈՒԼԵՑԻՆ ԱԳՈՒԼԻՍՈՒՄ

—

Զը կայ Կովկասում մի գիւղ, գուցէ եւ մի քաղաք (բացի Թիֆլիսից), որ աւելի առաջ եւ աւելի շատ շփված լինի քաղաքակրթական վայրերի հետ, քան Ագուլիսը։ Եւ ագուլեցին աւելի քաղաքացու կեանք ունի, քան Կովկասի մի ուրիշ քաղաքի բնակիչը։ Ուրեմն Ագուլիսը մի երջանիկ անկիւն է Կովկասում, մի «փոքրիկ Պարիզ» է, ինչպէս շատ անգամ անուանել են նրան։

Որքան Պարիզը աշխարհահռչակ է, իբրեւ Եւրոպայի լուսաւոր կենտրոններից մէկը, նոյնքան Կովկասը տխրահռչակ է իր մութ անկիւններով։ Այդ մութ անկիւններից մէկն է Ագուլիսը, ի հարկէ, իր չափով եւ իր ձեւով։—Սարսափելի մեղադրանք, կը գոչեն ագուլեցիները, վեր թռչելով տեղներիցը։ Բայց նայեցէք թէ ինչ է ագուլեցին։

Կովկասը դեռ այն շրջանում է գտնվում, երբ եւրոպական քաղաքակրթութիւնը պատաւաստվում է նրա վրա, երբ Կովկասի նահապետականութիւնն ու տգիտութիւնը հանդիպում են եւրոպական քաղաքակրթութեան հետ։ Այդ իսկ պատճառով Կովկասում առաջացել է մի պղտորութիւն, որի մաքրելը ինտելիգենցիայի գլխաւոր գործն է։

Ով եղել է Եւրոպայում, նա պարզ տեսած կը լինի այնտեղի առաջադիմութեան կանոնաւորութիւնը. եւ այդ է պատճառը, որ այնտեղ այնպիսի զզուելի բարդութիւններ չը կան, ինչպէս մեզ մօտ։ Այնտեղ կեանքը մեծ է, պահանջները մեծ, նոյնպէս մեծ են եւ բարդութիւնները, բայց ոչ Կովկասի նման զզուելի, մանր եւ կեղտոտ բարդութիւններ։

Օրինակ, Գերմանիայում մի բան մանաւանդ շատ աչքի է ընկնում—տղամարդու կրթութեան աւելի բարձր լինելը կնոջից։ Եւ Հաուպտմանի «Einsame Menschen»-ը իսկ որ դրամա է, որովհետեւ հերոսը շատ կրթված է, իսկ կինը եւ շրջապատը—անկիրթ։ Այդ դրաման նայելիս գերմանական ժողովուրդը սաստիկ զգացվում է եւ համարեա ամբողջ թատրոնը լալիս է։ Մենք, դիտելով այդ ներկայացումը, ակամայ ժպտում էինք։

Հերոսի կինը ամենաքնքոյշ սիրով սիրում է ամուսնուն. նոյնպէս եւ հերոսի ծնողները շատ ուժեղ սիրում են իրանց որդուն։ Եւ նա ունի կատարեալ ազատութիւն, նրա ետեւից չեն բամբասում, նրան չեն վռնդում հասարակական կեանքից, իբրեւ մի այլասերված արարածի, ինչպէս Կովկասի տգէտ շրջանն է այդպէս անում իր մէջ ընկած կրթվածին։

Հաուպտմանի հերոսը, հանդիպելով մի կրթված օրիորդի, զգում է, որ աւելի եւս անտանելի է դարձել նրա համար իր շրջանը եւ վերջը ծայրայեղ յուսահատութեան է հասնում։

Ի հարկէ սա դրամա է, գուցէ եւ սիրտ կորատող դրամա, բայց ինչ կը լինէր «Einsame Menschen»-ի հերոսի դրութիւնը, եթէ Կովկասի քաղաքական պղտոր կեանքում ապրէր։

Ահա այն, ինչ մեզ մօտ սովորական է, այնտեղ՝ լուսաւոր երկրներում, ուժեղ հարուածելու նիւթ է դառնում, այնտեղ այդ ներկայացնում են իբրեւ ծայրայեղ չարիք եւ դրան նայելիս՝ մարդիկ արտասուելու չափ զգացվում են...

Գերմանիայում հնի եւ նորի կռիւը այնքան ուժեղ չէ, ինչպէս մեզ մօտ, որովհետեւ այնտեղ հնի եւ նորի տարբերութիւնն էլ շատ մեծ չէ։ Այնտեղ, մանաւանդ քաղաքներում, հայրը եւ որդին տարբերվում են միմեանցից աւելի ժամանակակից կրթութեամբ, քան կրթութեան աստիճանով, այսինքն հայրը մի քանի տարի առաջ է կրթվել, իսկ որդին ուշ, այդ է նրանց գլխաւոր տարբերութիւնը։ Այնտեղ այնքան շատ չէ պատահում, որ գիւղում ապրող, անգրագէտ հայրը քաղաքում ունենայ համալսարանաւարտ որդի—ամբողջ հայեացքներով տարբեր իրանից—քան այդ մեզ մօտ է պատահում։

Բայց խօսքներս մատնաւորենք ագուլեցու մասին։

Ագուլեցին տասնեակ տարիներ առաջ է դուրս եկել նահապետականութիւնից, բայց մինչեւ այժմ էլ դեռ եւս չէ հասել ժամանակակից քաղաքակրթութեան։ Դեռ աւելին կարելի է ա-

կարմիր աւետարան եւ էլ ինչ ասես, որ չեն թափ, ամենքի պոչին մի-մի հրաշագործութիւն կցելով, որոնք ժամանակի ընթացքում հեքիաթի կերպարանք են ստանում։ Բայց ինչ միջոցներով են անցնում հնութիւնները ժողովրդի ձեռքը եւ ինչպէս փչանում, ոչնչանում։

Պարզ բան է, որ ժողովուրդը ինքը երբէք չէ հետաքրքրվում մի որ եւ է տեղ քանդել, փորել յատկապէս հնութիւններ գտնելու նպատակով, այլ հնութիւնները ժողովրդի ձեռքն են անցնում պատահաբար, դիպուածով։ Այսպէս, երբ գիւղացին տուն, դամ է շինում եւ հիմք փորում, կամ գետնափոր խուղեր շինում կաթը պահելու եւ այլն, կամ երբ կալ է շինում եւ բլուրների բարձր ծայրերը հարթում՝ յարդը քամուն տալու համար, կամ թէ պատ է շարում եւ երբ այս նպատակով տաշած, պատրաստի, յարմար քար է փնտրում, բացվում են կուրգաններ, գերեզմաններ, որոնց միջից ամեն տեսակ հնութիւններ են լոյս աշխարհ գալիս։ Եւ եթէ միանգամից պատկերացնէք ձեզ ամբողջ Կովկասի ազգաբնակութիւնը իրանց գիւղերով, այն ժամանակ պարզ կը լինի, թէ որքան պեղումներ է կատարում ժողովուրդը ինքնաբերաբար, առանց հասկանալու, որ հնագոյն կուլտուրայի թանգագին մնացորդներ է լոյս հանում. բայց որքան ցաւալի է, որ մինչեւ այժմ դեռ ոչ մի միջոց չէ մտածված այդպիսի դէպքերում դուրս եկած հնութիւնները ժողովրդի աւերիչ ճիրաններից ազատելու միջոցների մասին։

Ով փոքր է չատէ հետաքրքրված է այդ խնդրով եւ ժողովրդի մէջ դիտողութիւններ արած, նա անշուշտ համոզված կը լինի, որ միայն օտարները չեն յափշտակում մեր հնութիւնները—այդ դեռ մի կողմից մխիթարական է եւ գերադասելի է՝ բոլորովին ոչնչանալու հետ համեմատած,—այլ ժողովուրդը ամենաանխիղճ կերպով պատահաբար ձեռքն անցած հնութիւնները ոչնչացնում, կոտրում կամ բոլորովին այլանդակելով անպէտքացնում է։ Ի հարկէ այս ցաւալի իրողութիւնը առաջանում է նրանից, որ ժողովուրդը ազէտ է, ոչինչ հասկացողութիւն չունի հնութիւնների նշանակութեան, կամ արժէքի մասին, կամ եթէ ունի էլ, դա միայն նախապաշարմունք է, որ շատ դէպքերում միայն վնասում է։

Ես անձամբ հետաքրքրված լինելով հին իրերը ժողովրդի ձեռքից ազատելու խնդրով, շատ դէպքերի եմ ականատես եղել, շատ պատմութիւններ եմ լսել, որոնց թւելը աւելորդ եմ համարում՝ միայն այդ բոլորի վրա հիմնված մի քանի դիտողութիւններ պիտի անեմ այն բանի մասին, թէ ինչ տեսակ հնութիւններ են անցել եւ անցնում ժողովրդի ձեռքը, ինչ կարծիք ունի նրանց մասին ժողովուրդը, ինչպէս են նրանք փչանում ժողովրդի ձեռքում։

Հին կուլտուրայի մնացորդները կարելի է մի քանի տեսակի բաժանել, նայելով ժողովրդի նրա մասին ունեցած կարծիքին։

1) Փ ո ղ ե ր... ոսկի, արծաթ եւ պղինձ։ Առհասարակ ժողովուրդը հին փողերի մասին վատ կարծիք չունի, ձեռքին անցած դէպքում չէ փչացնում, այլ ոսկու ու արծաթի յարգը ըմբռնելով բերում է քաղաք եւ իրանից ոչ պատեան։ Եւ ագուլեցին չարունակ անմխիթար տրտնջում է, թէ նոր մոդա է դուրս եկել, որ աղջիկներն էլ պէտք է ուսում առնեն. տրտնջալով հանդերձ նա իր աղջկան կրթութիւն է տալիս, որովհետեւ առանց դրան բաները դժուարանում են...

Նոյնպէս ուսման վրա այդպիսի հայեացք ունենալն է պատճառը, որ երբ պատահաբար ագուլեցու ուսումնական որդին հարուստ աղջիկ չէ առնում կամ իր ամբողջ գիտութիւնը գործ չէ դնում փող աշխատելու վրա, նա դառնում է իր ծնողի համար չնչին, անպէտք արարած։

Երբ ագուլեցին դուրս է գալիս իր հայրենիքից, նա մի պատճառ էլ ունի։ Իր քարքարոտ հայրենիքը չէ կերակրում նրան, պէտք է մի ուրիշ տեղ որոնել կերակուր։ Նա միայն փող աշխատելու նպատակ է ունեցել եւ նա միշտ հաւատարիմ է եղել այդ դէվիզին։ Եւ տասնեակ տարիներ շարունակ ագուլեցին չէ մտածել հաստատ եւ իսկական կրթութեան մասին։

Ընդհանրապէս վերցրած, ագուլեցին միայն այն ժամանակ է մտածել բարձրագոյն կրթութեան մասին, երբ այլ եւս անհնարին է դառել տգէտ մնալով ճարպիկութեամբ, խորամանկութեամբ, մի խօսքով ստոր մրցումով փող աշխատել—եւ ահա այժմ ոչ մի տեղից սովորողների այնքան մեծ տոկոս չը կայ, ինչպէս Ագուլիսից. մինչդեռ այս բոպէին էլ ագուլեկաս տգէտ ոսկերիչների վրա ծախում, որոնք եւ հալում են իսկոյն, զանազան զարդեր չինելու համար։ Իսկ պղնձէ, երբեմն էլ արծաթ փողերը, որպէս քիսի «բարաքեաթ» պահում են գրպաններում եւ ոչ մի դէպքում չեն համաձայնվում բաժանվել նրանից, կարծելով իրանց քիսի մէջ «բարաքեաթ» չի մնայ։ Բացի սրանցից քաղաքներում մենք շատ անգամ տեսել ենք 2—3 հին արծաթ փողեր, որպէս ժամացոյցի զարդ, կախարած շղթաներից։

2) Պղնձից կամ բրոնզից արձաններ, զարդեր, նիզակներ, իրեր եւ այլն.—Նոյնպէս եւ կաւեղէն կճուճներ, չանախներ եւ քոցիներ.—սրանց մասին Գանձակի գիւղերում այն կարծիքն ունեն, որ «կռապաշտի զարդեր» են եւ իրանց հետ չարիք են բերում, դրա համար էլ, շատ քիչ բացառութեամբ, անմիջապէս ոչնչացնում են կամ ձեւափոխելով իրանց առօրեայ պէտքերին են ծառայեցնում։ (Այս մասին տես «Ազգագրական Հանդէսի» 1897 թ. գրքի № 308 երեսը «Բանանց գիւղի կուրգանները» մեր յօդուածը)։ Իսկ Կարսի նահանգում եւ այլ տեղերում թէեւ այդ տեսակ նախապաշարմունք չը կայ այդ իրերի մասին, բայց եւ նշանակութիւն տուող էլ չը կայ։ Այդպիսի իրեր գտնված դէպքերում, որ շատ յաճախ է պատահում, բոլորովին անպէտք եւ անշնչան բան համարելով փչացնում, նորից կորցնում, կամ տալիս են երեխաների ձեռքը որպէս խաղալիք եւ այդ ճանապարհով փչացնում։

3) Ապակեայ կամ քարէ յուլունքներ, կոճակներ, նոյնպէս եւ թանգագին քարեր։ Այսպիսի իրերի մասին ամեն տեղ ժողովուրդը լաւ կարծիք ունի եւ իբրեւ բուժիչ միջոց, կամ կախարդական իր, կախում են նորածին երեխաների վզերից, կամ լաւ, աչքի ընկնող անասունների ճակատին են կպցնում, մարդկանց «չար աչքից» ազատելու համար նրանց։

4) Խաչքարեր եւ արձանագրութիւններ։—Խաչքարերը ամեն տեղ, որպէս հրաշագործ սուրբի գերեզմաններ, միշտ խնամքով պահվում են եւ ժողովուրդը մեծ ակնածութեամբ է վերաբերվում դէպի նրանց։ Իսկ ինչ վերաբերում է սոսկ արձանագրութիւններին կամ բեւեռագրերին՝ ոչ մի նշանակութիւն չեն տալիս եւ ձեռքերը անցած դէպքերում գործ են ածում իրանց շինութիւնների համար. յիշեցէք Երեւանի նահանգի բեւեռագիր արձանագրութիւնը, որ շրված պատից հանեցին։

5) Ձեռագիր գրքեր.—աւետարաններ, պատմութեան գրքեր, Էփիմերդիներ, բժշկարաններ, Սողոմոնիներ, Հմայիլներ եւ այլն.—այսպիսի ձեռագիրներ շատ մեծ քանակութեամբ կան ամեն տեղ ժողովրդի ձեռքում, եւ նրանց մասին ժողովուրդը շատ լաւ կարծիք ունի, որպէս հրաշագործութիւններ, բժշկութիւններ անող բաների մասին, այդ պատճառով էլ մի քանի շերտ հաստ շորերով կարած, միշտ փակ պահում են տան նուիրական անկիւններում, աղօթում նրանց առաջ, նրանց միջոցով բժշկութիւններ անում, մատաղ կտրում եւ այլն։ Եւ պէտք է ասել, որ ոչ մի դէպքում չեն համաձայնվի այդ գրքերից եւ ոչ մէկը տալ հետաքրքրվողի ձեռքը կարդալու նպատակով, միանգամայն մեղք համարելով նրանց ձեռք զարկելը։ Մի անգամ ինձ շատ դժուար եղաւ համոզել գիւղացիներից մէկի տան դուռարից զօռով դուրս հանել համայիլը՝ կարդալու, եւ երբ ես քանդում էի համայիլի փաթաթոցը, նա ամենայն ջերմեռանդութեամբ աղօթք էր անում, աղաչում էր, որ զօրաւոր համայիլը ներէ իր մեղքը եւ չը պատժէ իրան։

Այսպէս ուրեմն, անթիւ փաստերի հիման վրա կարող ենք ասել, որ ամեն տարի շատ մեծ քանակութեամբ հին իրեր են անցնում ժողովրդի ձեռքը բոլորովին անգիտակցաբար եւ կամ ոչնչացվում, կամ թէ մեռած տառ մնում, փոշիների եւ ցեցի կեր դառնում եւ ժամանակի ընթացքում դարձեալ բոլորովին անդէտքանում, փչանում։

Ուրեմն, քանի դեռ ուշ չէ, լաւ կը լինի, որ ում ձեռքը որ իրաւունք կայ եւ միջոցների էլ կարողութիւն, թող միաժամանակ ուշք դարձնեն ոչ միայն հնութիւնները օտարների ճանկից ազատելու, այլ եւ ժողովրդի մէջ անդիտակցաբար լոյս ընկած իրերը կորստից ազատելու մասին։

Վերջացնելով մեր այս դիտողութիւնները, հրաւիրում ենք կոմսուհի Ուվարովայի բարձր ուշադրութիւնը այս հանգամանքների վրա։ Կոմսուհին, ինչպէս լրագիրները հաղորդում են, Կովկաս է գալու հնագիտական նպատակներով։

Ե. Համամչեանց

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ախալցխա, փետրվարի 24-ին

Կարդալով «Մշակ» լրագրի 36 համարում Ախալցխայից հաղորդած լուրը, այս երկտողովս յայտնում եմ, որ ես միայն հրաւիրվեցի կօնսիստորիայի հեռագրով առաջիկայ մարտի 2-ին լինելիք քննութեան համար չինականների ատեանում եկեղեցապատկան Դատանայ եւ Բօզալ աւերակների վէճի վերաբերութեամբ խորհրդակցելու պ. փաստաբանի հետ, իբրեւ գիտակ անձնաւորութիւն եկեղեցապատկան կալուածների վէճերի։ Ուրեմն իմ Թիֆլիս գնալը ոչ մի կապ չունի երէցփոխի գործերի հետ զուր պ. լրատուն ընկել է թիւր ենթադրութիւնների մէջ։

Աբրահամ քհն. Ղազարեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Փետրվարի 24-ից, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրի նախագահութեամբ, Պետերբուրգում տեղի են ունենում խորհրդակցութիւններ, որոնց նպատակն է միջոցներ որոնել Ռուսաստանում նաւթային արդիւնաբերութիւնը զարգացնելու համար։

—

Հայոց դերասանական խումբը, երեքշաբթի, փետրվարի 27-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերութեան թատրոնում, ներկայացրեց Գրիլպարցերի «Սաֆո» պիէսը։ «Սաֆո» վերցրած է յունական կեանքից եւ ներկայացնում է Սաֆո բանաստեղծուհուն եւ երգչուհուն նրա կեանքի այն շրջանում, երբ նա ինքը սիրահարվել է Ֆաօն երիտասարդի վրա։ Թէ Սաֆօի եւ Ֆաօնի եւ թէ միւս սակաւաթիւ գործողների դերերի մէջ մեծ տեղ են բռնում դատողութիւնը, ճոռոմաբան խօսակցութիւնը, դեկլամացիան։ Պիեսը բաղկացած է մի շարք պատկերներից, որոնց մէջ դրամատիական հանգոյցը ինքն ըստ ինքեան թոյլ է եւ պիեսի ամբողջ ոյժը մենախօսութիւնների մէջ է։ Խօսակցութիւնները չեն կրում իրանց վրա կենսական ընդհարումների դրոշմ եւ աւելի նմանվում են միմեանց հետեւող ոգեւորված ճառերի։ Տիկին Սիրանոյշ կարողացաւ աջողութեամբ դուրս գալ ճոռոմաբանութեան ովկիանոսի յորձանքներից եւ ներկայացրեց սիրող կնոջ հոգեկան տանջանքները եւ սրտի յուզմունքները։ Պետրոսեան՝ Ֆաօնի դերում, ստիպված էր մի շարք գեղեցիկ ճառեր արտասանել։ Տիկին Մէլիքեան, ստրկուհի Մելիտայի դերում, լաւ էր այն բոպէներում, երբ ներկայացնում էր խոնարհ ստրկուհու տիպը, բայց թոյլ էր այն տեղերում, ուր նա պէտք է ցոյց տար սիրոյ զգացմունքի ծագումը եւ բռնկումը։ Վրոյրի համար, որ կատարում էր Բանիէսի դերը, քիչ գործ էր վերապահված։ Հասարակութիւնը, որ լցրել էր թատրոնի մեծ մասը, ծափահարում էր ոգեւորութեամբ։ Ներկայացման սկզբում շատ խանգարում էր յուշարարի ձայնը, որ երկրորդ գործողութիւնից սկսեց մեղմանալ եւ իր սահմանի մէջ մտնել։

—

Մեզ հաղորդում են, որ Ախալքալաքի մեր թղթակցի յայտնած տեղեկութիւնը այն բանի մասին, թէ Ախալքալաքի կալուածատէրերը կապալագրաւի խիստ պահանջներ են անում անբերրիութիւնից վնասված գիւղացիներից, չէ հաստատվում Մ ո ւ թ ա ֆ ե ա ն ն ե ր ի վերաբերութեամբ, որոնք ներկայումս ոչ մի պահանջ չեն անում գիւղացիներին։ Մենք միայն կարող ենք ուրախանալ, որ դժբաղդ գիւղացիները ազատ կը լինեն նրանց վրա ծանրացած պարտքերի մի մասի վճարումից։

—

Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Երեւանի Հասարակական ժողովարանի չէնքում 1901 թ. փետրվարի 10-ին Երեւան քաղաքի չքաւորների օգտին կայացած զգեստաւոր պարահանդէսի մուտքը եղել է. 1) 208 հատ 2 ռուբլիանոց տոմսակների վաճառումից՝ 416 ր., 2) 190 հատ 1 ռուբլիանոց տոմսակների վաճառումից՝ 190 ր., 3) շամպայնի, կոնֆէտների եւ այլ վաճառումից՝ 316 ր. եւ 4) պրէմիաներից ու նուէրներից՝ 278 ր.—ընդամենը՝ 1200 ր։ Ծախքերը իր վրա է վերցրել պ. Ն.Ն. Զուտ արդիւնքը, 1200 ռուբլի, յանձնված է Երեւանի քաղաքագլխին քաղաքի չքաւոր բընակիչներին բաժանելու համար։ Երեկոյթը կազմող տիկին Մարիամ Մէլիք-Աղամալեան իր խորին շնորհակալութիւնն է յայտնում պ. Վ. Ի. Բալեասնիին, որ սիրալիր կերպով յանձն առաւ ըմպելիքներ վաճառելու քիօսքները զարդարելու աշխատանքը, Պոլտավեան գնդի հրամանատար Ս. Վ. Ֆլէյշէրին եւ Բաչքեադիքլեարեան բատալիոնի հրամանատար Ն. Ա. Շպակովսկուն, որոնք վարձ չը վերցրին զինուորական նուագածու խմբերի համար, Երեւան քաղաքի ամիս հանդստանում։

Ագուլիսի գլխաւոր պարապմունքն է բաժաժ պահելը, վերջերս եւ սերմ քնելը։ Այս աշխատանքը պահանջում է միայն մի քանի ամիս եւ սրանով զբաղվում են մի քանի անձնաւորութիւններ։ Ուրեմն սա մշտական աշխատանք չէ, մարդկանց ժամանակաւորապէս զբաղեցնում է, այն էլ ոչ բոլորին։ Յետոյ տեղական հնչին առեւտուրն է, որի մէջ մարդիկ աւելի փտում են, քան որ եւ է զբաղմունք գտնում։

Ագուլեցին պարապ է։

Պարապութեան ճահճում ամենից առաջ ծընվում է զզուելի բամբասանքը, որը անխնայ է դէպի ամենքը, որին ենթարկվում են ամենքը եւ մասնաւորապէս քիչ թէ շատ ինտելիգենտ համարված դասակարգը։

Ագուլեցու պարապմունքը բամբասանքն է եւ նա բամբասում է ամեն տեղ եւ ամեն բանի մասին։

Ահա անցաւ այս ինչ կինը, տեսէք ինչպիսի քայլուածք ունի—նա վատ կին է. տեսէք միւսին՝ նա տղամարդու նման գլխարկ է դրել—փչացած է. նայեցէք երրորդին՝ մազերը կտրված է, այն ինչի դէրիան կարճ է, յաճախ է զբօսնելու գնում, հիւրեր շատ է ընդունում, բազար է դուրս գալիս, շատ է գիրք կարդում, հովանոցը այսպէս է բռնում, ակնոցներ է գնում, յաճախ է քիթը սրբում, պօստ է գնում, նամակներ շատ է ստանում, ներկայացումներին մասնակցում է, նրան տիկին են ասում եւ այն եւ այն պատճառներով նա փչացած է, անպիտան է, անբարոյական է։

Բայց այդ բոլորը ոչինչ։ Մեզ կասեն, որ ամեն տեղ բամբասանքը կայ։ Մենք կը պատասխանենք, որ տարբերութիւնը միայն նրանումն է, որ ագուլեցին աւելի շատ է բամբասում։

Մէկը աղջիկ ունի մարդու տալու, իսկոյն միւսի աղջիկը խուլ է դուրս գալիս, հիւանդոտ, ջղային, ապուշ է դառնում։ Եւ այս բոլորը բերնէ բերան է անցնում, մեծանում, ուռչում է եւ բամբասանքի թեւերի վրա տարածվում է ամբողջ աւանում։ Այդ է պատճառը, որ այս բոպէին ով որ Ագուլիսում մարդու տալու աղջիկ ունի, մի շատ կրիտիկական դրութեան մէջ է լինում։ Աղջկայ տէրը պէտք է շատ ճարպիկ լինի, քաղաքագէտ, որ կարողանայ աղջկանից ազատվել եւ ազատ չունչ քաշել։

Նա, տեսնելով մօտ աղգականների սերտ յարաբերութիւնը, բամբասում է. ասում է, որ «նրանք միմեանց հետ են». ասում է, որ դա քրոջ ու եղբօր յարաբերութիւն չէ եւ վճռում,—թէ նրանք անբարոյական են։ Բայց գուցէ կասէք, որ դա բամբասանք չէ, որ վերը յիշածները ճշմարտութիւններ են, որ ագուլեցին զուր չէ խօսում։ Ոչ, աւելի շուտով մենք կարող ենք ենթադրել, որ ագուլեցու բամբասիրութիւնն է այդ ատիճանին հասել, քան անբարոյականութիւնը։

(Կը շարունակվի)

նի հասարակական ժողովարանի աւագների խորհրդին, որ վարձ չը վերցրեց դահլիճների համար, եւ այն բոլոր անձանց, որոնք պատեցին երեկոյթը իրանց ներկայութեամբ եւ նպաստեցին գործի աջողութեանը նուէրներով ու անձնական մասնակցութեամբ»։

—

«Новости» լրագրին հաղորդում են, որ կոմս Լ. Ն. Տոլստոյի առողջութիւնը լաւ չէ. նա չափազանց նիհարել է եւ սաստիկ ցաւեր է զգում լեարդի եւ երիկամունքների մէջ։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան առաջ միջնորդութիւն է յարուցված մի խումբ ինտելիգէնտների կողմից, որոնք թոյլատրութիւն են խնդրում հիմնելու մի ընկերութիւն, որ դիւրութիւններ տար Ռուսաստանի սահմաններում ճանապարհորդել ցանկացող անձերին։

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ, ինչպէս հաղորդում են լրագիրները, նորից հերթական է դարձած դեղատների արտօնութիւնները բոլորովին վերացնելու հարցը։

—

Ռուսական երկաթուղիների ներկայացուցիչների առաջիկայ VIII համաժողովում պէտք է քննվի եւ վճռվի մարդատար վագոնները էլէքտրականութեամբ լուսաւորելու հարցը։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են փետրվարի 22-ից. «Երէկ թեմական դպրոցի հոգաբարձութիւնը, իր հերթական նիստում, միաձայն որոշեց ներկայ տեսուչ պ. Տատեանցի հարցը։ Ինչպէս լսում ենք, արդէն պայմանաւորված են երեք տարի ժամանակով, տալով տեսչին ազատ իրաւունք ուսուցչական խումբ կազմելու։ Սա մի փաստ է, որ կարճ ժամանակում երիտասարդ տեսուչը կարողացաւ այնքան ընդունակութիւն ցոյց տալ, որ լիազորութիւն ստացաւ համալսարանաւարտ հոգաբարձութիւնից ազատ գործելու։ Վերջին տարիներս մի չարք նշանակովի լիազօր տնտեսներ վրդովեցրին թէ դպրոցի խաղաղութիւնը եւ թէ հասարակութեան խիղճը։ Դրանք ոչ այլ ինչ էին, եթէ ոչ մի ցաւ թէ ուղարկողի եւ թէ հասարակութեան համար։ Բայց այս վերջին տարին, չնորհիւ հոգաբարձութեան, որ դպրոցի շահերը եւ իր իրաւունքը պաշտպանել գիտէ, մեր դպրոցը ազատվեց այդ լիազօրներից։ Թող սա դաս լինի մի կարգ փարաջաւոր եւ անփարաջայ տեսուչներին եւ թող նրանք ըմբռնեն թէ արժանաւորութեան եւ լիազորութեան գաղտնիքը ինչումն է։ Հարկաւոր է բարեխղճութիւն եւ անկեղծ սէր դէպի գործը եւ ոչ թէ լիազորութեան կնդակ եւ աստուածաբանութեան դիպլոմ»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Փետրվարի 22-ին, իր հայրենի Խալափչա գիւղում վախճանվեց Թոքախտից ինժեներ-տեխնոլոգ Եփրեմ Տէր-Յակոբեան։ Դեռ ուսանողական նստարանից անգութ հիւծախտը բոյն էր դրել նրա թոքերում եւ ամեն տարի ստիպում էր նրան կիսատ թողնել կուրսը եւ յետ դառնալ հայրենիք։ Ուսման սէրը նա բարձր դասելով կեանքից, ինն երկար տարիներ գնում գալիս էր, մինչեւ որ կամքի ոյժը յաղթանակը տարաւ եւ նա տակուն յամառութեամբ վերջացրեց իր ուսումը, վերջնական քննութիւնը տալով Խարկովի տեխնոլոգիական ինստիտուտում։ 1890-ական թուականների սկզբում, նա կեանքի մէջ մտաւ, յուսալով թէ ազատ ասպարէզը եւ նիւթապէս ապահով կեանքը մի քանի տարի կը կուեն իր հիւանդութեան դէմ։ Սակայն այստեղ եւս կեանքը դառն էր եւ աշխատանքը ամեն րոպէ դառնութիւն էր բերում նրան։ Ո՛չ ուսուցչութեամբ պարապելու փորձը, ոչ կլիմայական ամենայարմար պայմաններում եւ տեղերում ստացած պաշտօնները թոյլ չը տուին նրան մի փոքր ազատ շունչ քաշելու։ Լինելով աղքատ ծնողների զաւակ, նա մինչեւ վերջն էլ մնաց աղքատ, բաւականանալով միայն այն աննշան վարձատրութիւններով, որ ստանում էր իր ընկերներից ընդունած պատուէրները կատարելով։ Անցեալ աշնան նա վճռեց ընդմիշտ գիւղը տեղափոխվել եւ այնտեղ էլ կնքեց իր երկրաւորը։ Նա իր ոյժերը նուիրում էր եւ մեր գրականութեան, գրում էր «Մշակում», ունի մի քանի թարգմանութիւններ»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Եղանակը այս փետրվար ամսի սկզբներում բոլորովին գարնանային էր եւ տաք, իսկ այս երկու օրս յանկարծ ցրտեց, ձիւն, թիփի է անում. շատ խոնաւ է եղանակը եւ վտանգաւոր փոփոխակայութեամբ։ Քաղաքիս առուտուրը դեռ չէ բացվել, որովհետեւ ճանապարհները չատ վատ են։ Հացի գինը չատ ընկած է, որովհետեւ հաւաքող չը կայ. լաւ ցորենի պուդը ծախվում է Կարսում 65—70 կոպէկով։ Հայ միայն կապալառուն է հաւաքում եւ այն էլ չատ ճարպիկութեամբ. սկզբներում ածիկ է, վատ է ցորենը ասելով չէր հաւաքում, առարկելով, որ հացի պէտք չունի, մինչեւ որ խեղճ գիւղացու հոգուն հասաւ, առանց փողի խօսք չէ կարելի եօլա գնալ, դրա համար էլ ինչ գնով էլ որ պատահեց ծախեց եւ հացի գինը ընկաւ. այժմ միայն իրանք կապալառուներն են հաւաքում. ուրիշ հաւաքող համարեա չը կայ»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Գիւնդիւզ Կալա գիւղի բնակիչ Սաֆար Մամէդ օղլին ատում է իր մեծ որդի՝ Շալբուզին, նրան տուն չէ թողնում, զրկում է եղած-չեղածից եւ միշտ հալածում է հայրական վաթանից, բնից, ծննդավայրից։ Զրկված որդին մի քանի անգամ աղերսանքով դիմում է հօրը խնայել իրան, յետ տալ իր սեփական, հալալ աշխատանքով գնած խանչալը, որը արծաթապատ է լինում, որպէս զի ծախէ խանչալը եւ դրա փողով կարողանայ գլուխ պահել. այդ էլ չէ աջողվում։ Ամեն բանից զրկված Շալբուզ Սաֆար օղլին, ճարահատեալ գտնում է ուրիշ սուր եւ մի օր Գիւնդիւզ Կալա գետակի ափին պատահում է իր կոչտ, կոպիտ եւ անհաշտ հօրը իր փոքր որդի Ալի փաչայի հետ գնալիս, կրկնում է իր աղաչանքը, բայց երբ այդ էլ չէ աջողվում, էլ երկար չէ մտածում, ուրը մահացու վէրքեր է հասցնում նրան։ Վէրքեր ստացողը մեռնում է չուտով։ Նահանգական դատարանի բաժինը այդ գործի քննութիւնը կատարում էր փետրվարի 20-ին. մեղադրվողի համար պաշտպան էր նշանակված դատարանի կողմից Մ. Սալամբէգեան, որը խնդրեց մեղմացնել մեղադրեալի յանցանքը, քանի որ նա մաքուր սրտով խոստովանում է իր կատարած յանցանքը։ Երկար խորհրդակցելուց յետոյ դատարանը հետեւեալ վճիռը կարդաց. Շալբուզ Սաֆար օղլուն զրկել բոլոր իրաւունքներից եւ դատապարտել տաժանակիր աշխատանքների տասն եւ երկու տարի ժամանակով»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

—

Լուի Մէնան

Պարիզ, փետրվարի 13-ին

Ֆրանսայի լուռ ու մեծ փառքերէն մէկը մեռաւ երէկ։ Լուի Մէնան՝ զվայլելի խորհող ու հաղուագիւտ բանաստեղծ մեռաւ։ Իր անունը ոչ միայն օտար երկիրներու, այլ եւ նոյն իսկ Ֆրանսայի մէջ չատ քիչերուն ծանօթ էր։ Որովհետեւ իր գործերը՝ ազնուական ու բեղուն արուեստի մը բարձր թարգմանութիւններ՝ պաշտօնական բանաստեղծներու ռամիկ սրտազեղումներուն առջեւ խանդաղատողներուն համար գոց գեղեցկութիւններ մնացած էին։

Այս ընտրուածներուն մէջ ընտրուած բանաստեղծը, որուն երազանքը՝ միշտ թեւաւոր ու քնարերգական, մտածումը՝ միշտ դաշնակաւոր ու երաժշտական եղաւ՝ կարծես գեղեցկութեան, արեւի ու ներդաշնակութեան աշխարհէ մը մեր դարուն մէջ մոլորած էր։

Լէքոնթ դը-Լիլի՝ արուեստի այս միւս աստուածին էն մտերիմներէն մէկը՝ Լուի Մէնան՝ գեղեցկութիւնը ջարդող ու գոհիին ու անիրաւը աստուածացնող այն ժամանակէն վիրաւորուած՝ ու դառնացած մանաւանդ՝ գրականութիւնը տեսնելով ապաստանարանը դարձած բոլոր մտքով հաշմանդամներուն, բոլոր իդէալի մնանկներուն, բոլոր մնափառ ու ցաւագար զրահօսներուն, բոլոր գիտակցութեամբ ու սրտով անդամալուծուածներուն, Լուի Մէնան՝ այս հրաշալիօրէն օժտուած արուեստագէտը՝ հրապարակէ քաշուած էր։ Իրեն հաւասարներու մահէն ետք, կարծես թէ ապրելը իրեն համար աւելորդ գտաւ։ Բոլորովին առանձնացած մարդերէն՝ որոնց անարգութիւնն ու ստրկութիւնը հետզհետէ կը զայրանար, ճշմարիտ գեղեցկութիւններ ու զուտ հրաշալիքներ արտադրած ըլլալու գոհունակութիւնով ու արդար հպատակութիւնովը լեցուած՝ «De la morale avant les Philosophes»-ի հեղինակը անհամբեր ու խաղաղ սպասեց մահուան՝ որ իր առջեւ պիտի բանար՝ իր զգուանքներուն, իր դառնութիւններուն ժոռացումին դռները։

Լուի Մէնան իր կեանքը երազանքներու եւ իմաստասիրական հայեցողութիւններու մէջ անցուցած չէ միայն։ Ինքը՝ ցեղէն է Եսքիլէսներուն, Սոփոկլէսներուն, հէլլէնական այն հիանալի արուեստագէտներուն, որ մտածումի մարդը՝ գործողութեան մարդէն չէին անջատեր։ Ժողովուրդին մէջ, ժողովուրդին հետը կապրէին, չոչափելու եւ տառապելու համար անոր ցաւերը, զգալու եւ սփոփերու համար անոր յուսահատութիւնները, ինչպէս նաեւ խանդավառուելու համար անոնց յոյսերով ու երգելու համար անոր ուրախութիւնները։

Լուի Մէնան բանաստեղծն ու խորհողը՝ արի ու պատուական քաղաքացի մըն ալ եղած է։ Ընկերային արդարութեան համոզուած պաշտպան՝ 1848-ի ֆրանսական կարեւոր դէպքերուն ատեն, Պրուդոնի՝ ֆրանսացի մեծ ընկերաբանին՝ «Ժողովուրդը» թերթին աշխատակցած ու ժողովրդական իրաւունքներուն համար ուժով ու վեհանձն կռիւ մը մղած է։

Իր քերթուածներէն ոմանք՝ ըմբոստացումի հոյակապ չունչով մը ուռած՝ եղբայրութեան նոր ժամանակներու տիրապետումը կաւետեն ու կը պատրաստեն։

Իր «Rêveries d'un Païen mystique» հատորը՝ ծայրէ ի ծայր ամբողջ գեղեցկութիւն է։ Իր «Հելլէնական բազմաստուածութիւն» (Le Polythéisme Hellénique) գործը իր տեսակին մէջ միակ աշխատութիւն մըն է։ Ունի նաեւ պատմական երեք երկասիրութիւններ. Արեւելքի հին ժողովուրդները. Հրէաները եւ Ցոյները։

Արուեստը երբ կը հեռանայ ժողովուրդէն, երբ կեանքի խորունկ աղբիւրներուն մէջ չի թաթիսեր իր արմատները, երբ գրասենեակին մէջ բանտարկուած՝ լոկ մտքի խաղ մը կը դառնայ, ոչ միայն իր դիրքն ու կոչումին կը ստէ, այլ եւ յուզումէ ու հիւթէ զրկուած՝ անձնասպան կը լլայ։ Որովհետեւ ինչ որ կը սիրենք արուեստի մարդուն մէջ, իր մտքին ու հոգիին սեպհական ծաւքերը չեն, այլ ամբողջ իր երկրին, իր ցեղին կեանքը, մարդկային կեանքը՝ բացատրուած իր խառնուածքին մէջէն։

Մարդկութեան մեծագոյն հանճարներուն դաղանիքը ասոր մէջ է։

Լուի Մէնան իր իմաստասիրութեան գործերէն զատ՝ իր միւս աշխատութիւններուն մէջ արուեստի այս իդէալը իրականացուցած է։

—

Թիւրքօ-հէլլէն վերջին պատերազմին ժամանակ, երբ Պարիզ՝ յոյներուն համար համակրական ցոյցեր կազմակերպեց, Լուի Մէնան, վայրկեան մը, իր երիտասարդութեան օրերու կորովը դտաւ։

Ցունաստան՝ գեղեցկութեան այս դասական հայրենիքը, վտանգի մէջ էր. կարելի՞ էր իրեն համար անտարբեր մնալ, ինքը՝ որ հէլլէն հանճարը հասկցած, սիրած եւ ուրիշներուն սիրեցնել տուած էր։ Ու եթէ իրեն անկարելի եղաւ Բայրոնի մը պէս իյնալ ազատութեան ու իրաւունքին համար փառաւոր մահով մը, գէթ իրեն պարտականութիւնը սեպեց միթինկներու մէջ անձկութեան աղաղակը արձակել՝ ի նպաստ տկարին, կոխկռտուած ու արիւնոտած Ցունաստանին։ Ու հոյակապ էր տեսքը ծերունիին, ալեւոր, դողդոջուն ու արդէն գերեզմանին ծրած ծերունիին՝ որ զգուանքով ու զայրոյթով իր ձայնը կը բարձրացնէր այն բարբարոս ցեղին դէմ, որուն ամբողջ գոյութիւնը մարդկութեան համար սուգի թաւկան մը պիտի ըլլայ։

Լուի Մէնան կը մեռնի հին յաջորդող սերունդներու մխիթարութեան ու խանդավառ պաշտամունքին համար ձգելով գործեր՝ որ ֆրանսական գրականութեան բացարձակ, անվիճելի ու էն մաքուր փառքերը կը կազմեն։

Տիգրան

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Новое-Время» լրագրին հեռագրում են Լօնդօնից. «Անգլիական լրագիրների բոլոր թղթակիցները ժամանցոյց են անում Դէվէտի զինուորական արտակարգ ընդունակութիւնների վրա, որ մի անգամ էլ կարողացաւ ազատվել իրան շրջապատող անգլիացիների երկաթեայ օղակից։ Թէպէտ եւ այդ ժամանակ Դէվէտ կորցրեց չատ ձիեր, բայց այս հանգամանքը մի առանձին նշանակութիւն չունի նրա զօրաբաժնի համար, որովհետեւ կորցրած ձիերի փոխանակ զօրաբաժինը նոր եւ գեղեցիկ ձիեր ստացաւ Հերցօգից։ Անգլիական գեներալները ուշացան մի ամբողջ օր եւ հասան Օրանժեան գետի ծանծաղուտը այն ժամանակ, երբ Դէվէտ արդէն մի օր առաջ ամենայն աջողութեամբ անցել էր գետից»։

—Անգլիական լրագիրները հաղորդում են, թէ Արաբիայում երեւացել է մի նոր խալիֆ Մահմէդի սերնդից. նա շատ հետեւողներ է գտնում, որոնք տարածում են երկրի մէջ «Մեկկա» անունով մի գիրք եւ հրաւիրում են ժողովրդին ապստամբվել թիւրքական բռնակալութեան դէմ։ Սուլթանը զօրքեր է ուղարկում Արաբիա, բայց դրամական միջոցների մեծ պակասութիւն է զգացվում։ Գերմանական մի սինդիկատ փոխատուութիւն է առաջարկում թիւրքական կառավարութեանը՝ հարկերի եւ մաքսային եկամուտի գրաւականով, նոյնպէս եւ այն պայմանով, որ թիւրքիան իր զօրքի համար անհրաժեշտ զէնքերի եւ ռազմամթերքի պատուէրները տայ բացառապէս գերմանական գործարաններին։ «Morning Leader» նկատում է, որ գերմանացիները թիւրքիայում երկաթուղիներ են շինում ամեն տեղ, ուր որ ուզում են. հիմա էլ կամենում են տիրանալ բոլոր պատուէրներին թիւրքական զօրքի համար եւ թիւրքիայի բոլոր եկամուտներին։ Իսկապէս պէտք էր, որ Անգլիան ուղարկէր նախ իր նաւատորմը Դարդանէլ եւ ապա ուլտիմատում ուղարկէր Բերլին։ Քաղաքական շրջաններում ենթադրում են, որ գերմանական սինդիկատի առաջարկութիւնը չէ կարող ընդունվել թիւրքիայից, բայց հէնց այն փաստը, որ այդ տեսակ առաջարկութիւն տեղի է ունենում, մի շատ բնորոշ եւ նշանաւոր հանգամանք է։

—Սերբիական թագաւորը յայտնեց «Figaro» լրագրի թղթակցին, թէ նա, եթէ Վիէննա գնար էլ, չէր կարող կենդանի գտնել հօրը, որովհետեւ նրա հիւանդութիւնը չափազանց արագ ընթացք ունէր, իսկ թաղմանը ներկայ չեղաւ, որովհետեւ հօր թաղումը տեղի ունեցաւ օտարութեան մէջ եւ այդ հանգամանքը մեծ ցաւ պատճառեց նրան։ «Տարաձայնութիւնը—ասաց նա—իմ եւ հօրս մէջ միայն քաղաքական էր։ Հօրս ռէժիմը անհամապատասխան էր թուում ինձ։ Հայրս դիմադրում էր բարենորոգումներին եւ չէր կարծում, թէ միաժամանակ կարելի է բարեկամութիւն պահպանել եւ Ռուսաստանի եւ Աւստրիայի հետ։ Այսպիսի ուղղութիւն ունեցող քաղաքականութեամբ նա ստեղծում էր շատ անգամ վտանգաւոր դրութիւն, իսկ յետադիմական ռէժիմը սպառնում էր սերբիական ժողովրդի շահերին։ Իմ անելիքս կայանում է նրանում, որ կարողանամ մի հաստատուն մինիստրութիւն կազմել տաղանդաւոր անձերից, որոնք պարզ ժողովրդական ծրագիր ունենան։ Պէտք է սրան աւելացնել եւ այն, որ Սերբիան մնտեսականապէս առաջադիմում է»։

—«Figaro» լրագրի Բերլինի թղթակիցը հեռագրում է, թէ Վիլհէլմ կայսրը անձամբ գնաց ֆրանսիական դեսպանի մօտ, որպէս զի հաղորդէ նրան, թէ Գերմանիայի, Եապոնիայի եւ Անգլիայի դիմումը Չինաստանին ռուս-չինական համաձայնութեան մասին Մանջուրիայի վերաբերմամբ ամենեւին թշնամական գոյն չէ կրում, որ վերագրում է այդ քայլին Լօնդոնի մամուլը։ Գերմանական կայսրը յայտնեց, թէ նա չէ կամենում խառնվել մանջուրական գործերի մէջ, այլ ի նկատի ունի միայն համաձայնութիւն պահպանել պետութիւնների մէջ, համոզելով Ֆրանսիային եւ Ռուսաստանին չը գործել բաժնված միւս պետութիւններից եւ չը ստանալ մնտեսական կամ հողային արտօնութիւններ, առաջ քան թէ խաղաղութեան ընդհանուր բանակցութիւնները վերջացած կը լինեն։ Միացեալ-Նահանգներն եւս համակրում են Գերմանիայի այս կարծիքին։

—«Daily Mail» ասում է, թէ ռուս-չինական համաձայնութիւնը հաւանականաբար չի հաստատվի չինական կառավարութեան կողմից եւ թէպէտ նա արդէն ընդունված է Մուկդէնի թաթար գեներալից, բայց այդ հանգամանքը մեծ նշանակութիւն ունենալ չէ կարող։

## „ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

26 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բիլլբասէն ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բօգոլէպովի առողջական դրութեան մասին. «Գիշերը քիչ քնեց ու անհանգիստ. տաքութիւնը՝ երեկոյեան 38,9 էր, առաւօտեան՝ 38,2. զարկերակը՝ 98. շընչառութիւնը՝ 16։ Վզի աջ կողմում ապիի տեղը ճղեցին եւ բաց արեցին պալարը, որից արտաթորվեց մօտ մի հացի գդալ ժահր։ Կուլ տալը եւ շնչառութիւնը առաջվան պէս ազատ են։ Ընդհանուր դրութիւնը բաւարար է։

Փետրվարի 27-ին պաժերի կօրպուսը կատարեց իր տօնը, որին ներկայ էին Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ եւ Մեծ Իշխանուհի Ելիսավետա Մավրիկիեւնա։

ՄԻՒՆԽԷՆ։ Երէկ հանդիսաւոր ճաշկերոյթ կար պրինց-խնամակալի ծննդեան 80-ամեակի առիթով։ Ճաշկերոյթի ժամանակ պրինց Լիւդվիգ, թաս առաջարկելով պրինց-խնամակալի կենացը, ասաց, որ նա ամեն կերպ ձգտում է նպաստել Բավարիայի շահերին կայսրութեան մէջ, կատարեալ համաձայնութիւն պահպանելով կայսրի դաշնակից միւս պետութիւնների եւ ազատ քաղաքների հետ։ Պրինցը շեշտելով մատնացոյց արեց այն բանը, որ բավարական կառավարութեան ներկայացուցիչները արտասահմանում միշտ գործում են սերտ շաղկապված

գերմանական կայսրութեան ներկայացուցիչների հետ. դրանով եւս աւելի չնորհակալութեան է արժանի կայսրի երջանիկ ձգտումը խաղաղութիւն պահպանել նախ Գերմանիայի համար եւ յետոյ նաեւ ամբողջ աշխարհի համար ու մի եւ նոյն ժամանակ անհրաժեշտ հովանաւորութիւն ցոյց տալ կայսրութեան նպատակներին. ապացոյց դրան չինական արշաւանքը, որի չուտափոյթ եւ աջող վերջաւորութիւն են ցանկանում ամենքը։

ԲԵՐԼԻՆ։ Բիւլբտէն կայսրի առողջական դրութեան մասին. «Վէրքը անարգել լաւանում է. ուռոյցքը չարունակում է նստել»։

ՄԻՒՆԽԷՆ։ Աւստրիական կայսրը եկաւ այստեղ. նրան հանդիպեցին կայարանում պրինց խնամակալը եւ պրինց Լէօպոլդ իր ամուսնու հետ։

28 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնա, Թագաւոր Կայսրի եւ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնայի բարեհաճութեամբ եւ Պրինցուհի Եւգենիա Մաքսիմիլիանօվնայի ու Պրինց Ալէքսանդր Պետրովիչ Օլդենբուրգսկիների համաձայնութեամբ նշանադրված է Պրինց Պեսար Ալէքսանդրովիչ Օլդենբուրգսկու հետ։

Բարձրագոյն բարեհաճութեամբ ներքին գործերի մինիստրը որոշեց. «Новое Время» լրագրից վերացնել 1879 թ-ի յունվարի 6-ին եւ 1880 թ-ի հոկտեմբերի 2-ին նրան յայտնած նախազգուշութիւնների ոյժը։

ՎԻԵՆՆԱ։ Պատգամաւորների ժողովը, երկարատեւ եւ զրգռված վիճաբանութիւններից յետոյ, երկրորդ եւ երրորդ ընթերցանութիւնների ժամանակ ընդունեց զինուորակոչին վերաբերեալ նախագիծը։ Վիճաբանութիւնների ընթացքում պետական պաշտպանութեան մինիստրը ապացուցանում էր, որ աւստրիական պաշտպանողական սիստեմը ոչինչ կրճատումներ չէ կարող կրել եւ պահանջում է, ընդհակառակն, նաւաւատորմը զարգացնել։ Զօրեղագոյն ֆակտորը յանձն առաւ նախաձեռնութիւն փոփոխութիւններին վերաբերեալ հարցը քննելու համար, բայց առայժմ դեռ ոչինչ չէ արված. ամենքը անվերջ զինաւորվում են եւ ով կամենում է պաշտպանել իր շահերը, նա պէտք է զինաւորվի նոյնպէս։ Մինիստրը մատնացոյց է անում միլիցիական սիստեմի պակասութիւնների վրա եւ օրինակ է բերում Անգլիան, որը հարաւաֆրիկական պատերազմի դաշերից յետոյ ուժեղացնում է այժմ իր մշտական զօրքը՝ անխուսափելի անհրաժեշտ միատեսակ ընտրութիւն մտցնելու համար զօրքի մէջ։ Ծառայութեան ժամանակամիջոցի կրճատումը Աւստրիայում անհնար է եւ զօրքի մէջ պէտք է կարդ տիրէ։ Կրամարին իր պատասխան ճառի մէջ այն միտքն է անցկացնում, որ չէխերը հակառակ չեն Գերմանիայի հետ դաշնակցութեան դէմ, Գերմանիայի, որը պաշտպանում է ընդհանուր խաղաղութիւնը, բայց համագերմանական կուսակցութեան պահանջը՝ մտցնել Աւստրիան պետական-իրաւական տեսակէտից գերմանական դաշնակցութեան մէջ, կը դնէր Աւստրիան մի ատիճանի վրա Բավարիայի եւ Սաքսոնիայի հետ (բացագանչութիւններ)։ Չէխերի նպատակն այն է, որպէս զի չը թոյլ տան գերմանական Աւստրիայի միացումը գերմանական կայսրութեան հետ. այդ միացումը կը խորտակէր Աւստրիային, կը խախտէր Եւրոպայի հաւասարակշռութիւնը եւ կը դարձնէր Գերմանիան առաջին համաշխարհային պետութիւն, տէր միջին Եւրոպայի, Բալկանի եւ Ասիայի։ Ապա մի քանի չէխեր սկսեցին խօսել չէխերէն, բայց նախագահը զրկեց նրանց խօսելու իրաւունքից։ Ջայնատուութիւնը տեղի ունեցաւ սաստիկ աղմուկի մէջ։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Կրանբերն հաղորդում է, որ անգլիական կառավարութիւնը չը համաձայնվեց այն փոփոխութիւնների հետ, որ կամենում էր մտցնել Միացեալ-Նահանգների սենատը Գէյի եւ Պաունսէֆոտի դաշնագրի մէջ, այդ հարցի առիթով կառավարութիւնը բանակցութիւններ չը վարեց ոչ մի ուրիշ պետութեան հետ։ Բալֆուր յայտնում է, որ ներկայ րոպէում ոչինչ չէ կարող հաղորդել Բոտայի հետ ունեցած բանակցութիւնների վերաբերմամբ։

ԼՕՆԴՕՆ։ Ծովային բիւդժէտի մէջ 1901—1902 թ-ների համար ծախսերը հաշված են ընդհանրապէս 30,875,000 ֆունտ ստէրլինգ, որ երկու միլիոնով աւել է 1900—1901 թ-ների ծախսերից։ Այդ երկու միլիոնի կէսից աւելին յատկացնվելու է նաւաշինութեանը։ Ծովային ոյժերի կազմը պէտք է բաղկացած լինի 118,635 մարդուց կամ անցեալ տարուց 3,745 մարդով աւելի։

ԲԵՐԼԻՆ։ Վալդէրզէէ հաղորդում է Պէկինից. «Այն պատերազմում, որի մասին հաղորդված էր երէկ. Անսուլինեան անցքից դէպի արեւմուտք, մեր կողմից թեթեւ վիրաւորված է միայն մէկ մարդ. չինացիները փախան, թողնելով 250 մարդ սպանված եւ չորս արագաձիգ թնդանօթներ, որոնց գրաւելու ժամանակ քաջութիւն ցոյց տուեց պօրուչիկ Հիրշ։ Հեծելազօրքը հալածում էր թշնամուն Զիտֆուի վրայով 30 կիլոմէտր տարածութեան վրա։ Զորրորդ գնդի երկրորդ բատալիօնը բանակած է Ֆուսպինդի մօտ եւ աւելի դէպի արեւմուտք Մեծ Պատից՝ չինական զօրքերի վերադարձը արգելելու նպատակով։

ԿԱՊՇՏԱԴ։ Այսօր ժանտախտով հիւանդանալու 12 նոր դէպքեր կային. հիւանդացողների թիւում երեքը եւրոպացիներ են, որոնցից մէկը մեռաւ։

ՄԻՒՆԽԷՆ։ Գերմանական թագաժառանգ պրինցը ճանապարհ ընկաւ Բերլին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(ծամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 րօպէ։

№ 5 գնացքը։ № 3 գնացքը.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Բաղուից դուրս է գալիս | ցեր. | 3 ժ. 5 ր. | գիշ. | 11 ժ. 15 ր. |
| Թիֆլիս է հասնում | առ. | 8 » 23 » | եր. | 5 » 35 » |
| Թիֆլիսից դուրս է գալիս | » | 9 » 3 » | եր. | 6 » 30 » |
| Բաթում է հասնում | եր. | 9 » 11 » | առ. | 7 » 10 » |

№ 6 գնացքը։ № 4 գնացքը.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Բաթումից դուրս է գալիս | առ. | 8 ժ. 56 ր. | եր. | 10 ժ. 47 ր. |
| Թիֆլիս է հասնում | եր. | 8 » 42 » | առ. | 11 » 18 » |
| Թիֆլիսից դուրս է գալիս | » | 9 » 22 » | » | 12 » 36 » |
| Բաղու է հասնում | ցեր. | 1 » 25 « | » | 7 » — » |

արագ գնացք

Շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը.

| | | |
|---|---|---|
| Թիֆլիսից դուրս է գալիս | առաւ. | 7 ժ. 56 ր. |
| Բաղու է հասնում | երեկ. | 9 » — » |
| Բաղուից դուրս է գալիս | առաւ. | 6 » 50 » |
| Թիֆլիս է հասնում | երեկ. | 8 » 12 » |

—

| | | |
|---|---|---|
| Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս | երեկ. | 10 ժ. — |
| Ալէքսանդրօպոլ հասնում է | առ. | 8 » 27 ր. |
| Կարս հասնում է | ցեր. | 12 » 23 » |
| Կարսից դուրս է գալիս | ցեր. | 4 » 12 » |
| Ալէքսանդրօպոլ հասնում է | երեկ. | 7 » 40 » |
| Թիֆլիս հասնում է | առ. | 6 » 15 » |

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա. Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (սիֆիլիս) և միզասեռ. հիանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ն. Ն. Ռոսսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), և վներ. հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ց. Առվանիցակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ
Դ—ր Վ. ԹՈՏՈՄԵԱՆՑԻ եւ Ե. ԹՈՓՉԵԱՆԻ
«DIE SOZIAL OKONOMISCHE TÜRKEI»
աշխատութիւնը
ԳԻՆԸ 2 ՄԱՐԿ
Դիմել՝ Berlin Verlagshandlung R. Prager NW 7։ 3—3

„ՄՈՒՐՃ" ԱՄՍԱԳՐԻ
1889, 1890, 1891, 1892, 1893 թ. ամփոփ տարիները կարելի է ձեռք բերել 50—80% զիջումով։
Դիմել—Վիլեամինօվսկայա № 24, գրասենեակ Ա. Զարգարեանցի եւ Փ. Վարդազարեանի։
(չ. շ.) 10—20

Տալիս եմ մասնաւոր դասեր
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻՑ
Հասցէս՝ Тройцкая улица, домъ № 11. кв. Мелкумова.

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Ուրբաթ, մարտի 2-ին
Բագուի հայ դրամատիկ դերասանական խումբը, մասնակցութեամբ յայտնի դերասանուհի տ. Սիրանոյշի, կը ներկայացնէ
Ի ՆՊԱՍՏ Պ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
ԻԶԷԻԼ
ողբերգութիւնը Բուդդայի կեանքից, 4 գործողութեամբ, հեղինակ. Սիլվէստրի եւ Մօրանի, թարգմ. Ա. Վրոյրի
Իզէիլի դերը կը կատարէ տ. ՍԻՐԱՆՈՇ
Սիդարդայի (Բուդդա) դերը կը կատարէ պ. ՊԵՏՐՈՍԵԱՆ
Տեղերի գները բէնէֆիսային են։ Տոմսակները ծախվում են թատրոնի կասսայում։ Սկիզբը 8 ժամին է։ (չ. ո.) 2—2

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄԵՐ
«Լ. ԻԶՈՆՕՄԻՏԻՍ» և «ԲԵՐԹԻ և ԸՆԿ.»
ֆիրմաների
սպիտակ բանդերոլով, ծախվում են ֆրանսիական ընկերութեան գրասենեակում, նախկին Արծրունի գալէրէյայում № 127.
(հ. շ.) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ նրա դիւանատանը 1901 թ-ի մարտի 3-ին, ցերեկվայ ժամի 1-ին, նշանակված է աճուրդ կապալով տալու բետոնից ջրմուղ խողովակ շինելու աշխատանքները՝ Վօզնեսենսկայա փողոցից Կօսոյ փողոցով մինչեւ Արուցեվի տունը, 50 պօղ. սաժ. երկարութեամբ, 1110 ր. գումարի։ Աճուրդին մասնակցողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր մի օրերը, ժամի 9-ից մինչեւ 3-ը։
1—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ
Աւագների խորհուրդը, կանոնադրութեան 42-դ յօդուածի համաձայն, խնդրում է պ.պ. անդամներին շնորհ բերել ընդհանուր ժողովի կիրակի, մարտի 4-ին, երեկոյեան 9 ժամին, թեկնածուներին քուէարկելու եւ տնտեսական անյետաձգելի հարցերը քննելու համար։
2—3

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ
որոնում է աշխատանք. կարող է լինել բոնա հայ ընտանիքի մէջ կամ ծառայել խանութներում որպէս հաշվապահ համաձայն եւ քաղաքից դուրս գնալ։ Հասցէն՝ Րէուտօվսկայա փողոց, № 41։ Հարցնել Խաչատուր Մխիթարեանցին։
2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ Թիֆլիս քաղաքի փողոցներում տնկված ծառերը քաղաքի սեփականութիւն են եւ ոչ տանտէրերի։
2—3

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԻՆ ՄԱՐԿԱՆԵՐ
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ԳՆԵԼ
Այժմեան տեսակներից գնում եմ 3, 4, 8, 16 չահանոց եւ բոլոր զրանանոց մարկանները։
Դիմել՝ Тифлисъ, Вельяминовская, № 24. А. Я—янцу. 2—2

Լոյս տեսան
1. Ո՞Վ Է ՕԳՆՈՂԸՐԸ . . . . . 15 կ.
2. ԱՌՈՂՋ ՀՈԳԻՆ ԱՌՈՂՋ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ. . . 10 կ.
Ճանապարհածախս իւրաքանչիւրին 3 կոպէկ։ Արդիւնքը յատկացվում է Ախալցխայում հիմնվելիք աշխատանոցի օգտին։ Դիմել՝ Петербургъ, Владимірскій, 3 кв. 8. Д-ру А. С. Кечегьяну. 2—6

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԴԵՐՕԼՕՎ
ՅԵԼԻԻԼԵԱՐՆԻՑ
ԲԱՂԴԱԴԻ ՍԵՐՄ
կը վաճառվի նպաստաւոր պայմաններով։ Անանովի քարվանսարա, № 48 գրասենեակը։
8—10

Թարգմանւում է
Զօլաի «ՓՈՂ» (Деньги) վէպը։
5—5

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայելեան փողոց և Բազում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։
69—100

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ
ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ
Հատոր առաջին։—XVI—XVII դար
ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ
Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.
Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, редакція «Мшакъ». 5—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ։
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, փետրվարի 28-ին (մարտի 13)—շոգենաւ՝ ԱՐՄԵՆԻ, կապիտան ՎԵՐՆ։ Եւ այսպէս շարունակաբար, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են տեղերակնից պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անավէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. չ.) 16—20


Дозволено цензурою, Тифлисъ, 28 Февраля 1901 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27